ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 875-Ն

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ 2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա կազմակերպվող երկու փուլով մրցույթի ընթացակարգի շրջանակում՝

1) նախաորակավորված մասնակիցների հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև 2-րդ փուլի հայտերով ներկայացվելիք փաստաթղթերը սահմանվում են 2-րդ փուլի հրավերով.

2) 2-րդ փուլի հրավերով նախատեսվում է նաև, որ՝

ա. մասնակիցը ներկայացնում է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, հայտի ապահովման չափը սահմանվում է ծառայության գնման գնի երեք տոկոսի չափով: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի երեք տոկոսին,

բ. ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացնում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է ծառայության գնման գնի տասը տոկոսին: Եթե ընտրված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա պայմանագրի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի տասը տոկոսին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ